ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ

Տեղեկացվում է Ձեզ , որ <<Վաղարշապատի Գ.Նժդեհի անվան №8 հիմնական դպրոց >> պետական ոչ առևտրային կազմակերպության խորհուրդը կայացրել է որոշում տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ հայտարարելու մասին:

Մրցույթը կկայանա 2020 թվականի օգոստոսի 13 -ին ժամը 11^{00}-ին :

Կից ներկայացվում են՝ կառավարման խորհրդի 18.06.2020թ N 14 արձանագրության քաղվածքը և հայտարարության տեքստը:

Առդիր 2 թերթ:

Խորհրդի նախագահ՝ Գ.Հովհաննիսյան

18.06.2020թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ ԱՄ-11849-2020
13 06 2020

<< Վաղարշապատի Գ.Նժդեհի

անվան №8 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ

կառավարման խորհուրդ

Քաղվածք

<<ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Գ.ՆԺԴԵՀԻ ԱՆՎԱՆ № 8 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ >> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2020Թ. ՀՈՒՆԻՍԻ 18 -ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ N 14 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 2 ԿԵՏԻ

ՕՐԱԿԱՐԳ.

Համաձայն ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 817-Ն որոշմամբ հաստատված կարգի <<Վաղարշապատի Գ.Նժդեհի անվան № 8 հիմն. դպրոց>>պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար նոր մրցույթ հայտարարելու հարցը:

/ Զեկուցող՝ Գ.Հովհաննիսյան /

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 817-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի սահմանված դրույթներով՝ դպրոցի կառավարման խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. ՀՀ Արմավիրի մարզի <<Վաղարշապատի Գ.Նժդեհի անվան № 8 հիմն. դպրոց>>պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի համար անցկացնել նոր մրցույթ:
   Մրցույթը նշանակել 2020թ. օգոստոսի 13 –ին ժամը 11^{00}-ին:

Խորհրդի նախագահ՝ Գ.Հովհաննիսյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի <<Վաղարշապատի Գ.Նժդեհի անվան № 8 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ հաստատության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:
Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1.ՀՀ քաղաքացիությունը,
2.բարձրագույն կրթությունը,
3.ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝
1.դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով,
2.ՀՀ քաղաքացու անձնագրի պատճենը,
3.հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը,
4.տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (ներկայացնել մրցույթից առնվազն երեք օր առաջ),
5.հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ (դրանց առկայության դեպքում),
6.աշխատանքային գրքույկի պատճենը:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են 2020թ. հուլիս 6-ից օգոստոսի 4-ը ներառյալ, ամեն օր ժամը 10^{00}-ից մինչև 15^{00}-ը , բացի շաբաթ , կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից , << Վաղարշապատի Գ.Նժդեհի անվան № 8 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ում:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:
Մրցույթը տեղի կունենա 2020 թվականի օգոստոսի 13–ին ժամը11^{00}-ին <<Վաղարշապատի Գ.Նժդեհի անվան №8 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ում:

Հասցե՝ Արմավիրի մարզ, ք.Էջմիածին Մանուշյան 2/3

Տեղեկությունների համար զանգահարել 093-07-95-70 ,093-96-16-76 հեռախոսահամարներով